

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱՆՆԱ ԱՐԹՈՒՐԻ ՇԱՀԲԱԶՑԱՆ

**ԱՆԳԼԵՐԵՆ ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ՆՈՐԱԿԱԶՄՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐԺԵՔՈՒԹՅԱՆ
ՊԱՀՊԱՆՄԱՆ ԽՆԴԻՐԸ ՀԱՅԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՎԱԾՔՈՒՄ (Զ. ՌՈՈՒԼԻՆԳԻ
«ՀԱՐՐԻ ՓՈԹԵՐԸ ԵՎ ՓԻԼԻՍՈՓԱՑԱԿԱՆ ՔԱՐԸ» ՎԵՊԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ)**

**Ժ.02.07 - «Ռումանագերմանական լեզուներ» մասնագիտությամբ բանասիրական
գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության**

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ-2025

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի Վ. Բրյուսովի անվան
պետական համալսարանում:

Գիտական ղեկավար՝ Բ.Գ.Թ., դոցենտ Քրիստինե Հովհաննեսի Սողիկյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ Բ.Գ.Դ., պրոֆեսոր Նարինե Լևոնի Հարությունյան
Բ.Գ.Թ., դոցենտ Լիլիթ Ասատուրի Բադալյան

Առաջատար կազմակերպություն՝ Վանաձորի Հ. Թումանյանի անվան
պետական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2025 թվականի նոյեմբերի
26-ին՝ ժամը 11:00-ին, ՀՀ ԲԿԳԿ-ի Երևանի պետական համալսարանում գործող 009
«Օտար լեզուներ» մասնագիտական խորհրդի նիստում (հասցե՝ Երևան, 0025, Ալեք
Մանուկյան 1):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ԵՊՀ գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2025 թվականի հոկտեմբերի 21-ին:

Մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար,
Բ.Գ.Դ., պրոֆեսոր՝



Գայանե Մուրադյան

Ժամանակակից **Ֆենթըզի գրական ժանրն**, ակնհայտորեն, սիրված և պահանջված է ընթերցողների շրջանում: Գրական ցանկացած ստեղծագործություն հորինվածք է, հեղինակի մտքում զարգացող և ընթերցողին ներկայացվող խոսույթ, մինչդեռ ֆենթըզի գրական ժանրի դեպքում գործածվում են երևակայության առավել բարձր մակարդակներ: Այստեղ արհեստավարժ կերպով կարող են համադրվել իրական ու հորինված աշխարհները, կամ էլ դեպքերը կարող են զարգանալ ուրույն կանոններով, վայրերով, բնակչությամբ, բուսականությամբ, կենդանական աշխարհով, իրերով ու առարկաներով, անիրական կենդանի արարածներով լիովին հորինված իրականության մեջ:

Այս ամենը, բնականաբար, արտահայտվում է լեզվական մակարդակում. հենց լեզվական արտահայտումն է ապահովում այն կամուրջը, որով ընթերցողին հասանելի են դառնում հեղինակի մտադրությունը ու նրա երևակայության բոլոր արգասիքները: Ֆենթըզի ժանրի ստեղծագործությունների լեզվական կարևորագույն առանձնահատկությունը հեղինակային նորակազմություններն են. վերջիններս նորաբանությունների ենթատեսակ են, որոնք չեն անցնում գործուն բառապաշար և հիմնականում բնորոշ են գեղարվեստական ստեղծագործություններին:

Նորաստեղծ լեզվական միավորների դերն ու նշանակությունը ընթերցողի համար չի կարելի թերագնահատել, թերևս, ամենահայտնի ու սիրված «Հարրի Փոթեր» ֆենթըզի վիպաշարում: Այստեղ հանդիպող նորակազմություններն աչքի են ընկնում բառակազմական, բառիմաստային ու լեզվագործաբանական առանձնահատկություններով: Դրանցից յուրաքանչյուրը տեքստում ունի հաղորդակցական կոնկրետ գործառույթ: Նորակազմությունները պարզապես հորինված չեն հեղինակի կողմից՝ պայմանականորեն անվանելու այս կամ այն նշանակալի: Դրանց կերտման ու կազմության մեջ կա հստակ մտադրություն ու նպատակ: Հենց այս նորաստեղծ բառապաշարի լույսի ներքո առանձնահատուկ կարևորություն են ձեռք բերում վեպի թարգմանության գործընթացն ու դրա արդյունքը:

Այսպիսով, ուսումնասիրության **նյութը** գեղարվեստական գրականության ուրույն դրսևորում հանդիսացող ֆենթըզի ժանրն է՝ վառ երևակայությամբ ստեղծված իրական և հորինված աշխարհներով, լեզվական արտահայտում ստացած պատկերներով:

Ատենախոսության **ուսումնասիրության առարկան** «Հարրի Փոթեր» վիպաշարի առաջին հատորի հեղինակային նորակազմությունների ողջ համակազմն է՝ հայերեն թարգմանվածքում համարժեք պահպանման տեսանկյունից՝ հաշվի առնելով այս նորաստեղծ բառային միավորների իմաստագործաբանական առանձնահատկությունները:

Հետազոտության **փաստական նյութը** Ջ. Ռոուլինգի «Հարրի Փոթերը և փիլիսոփայական քարը» վեպում առկա հեղինակային նորակազմություններն են ու դրանց հայերեն թարգմանությունները Ա. Ջիվանյանի և Լ. Մկրտչյանի թարգմանվածքներում:

Աշխատանքի **նպատակն** է որոշարկել հեղինակային նորակազմությունների ժանրաստեղծ նշանակությունը «Հարրի Փոթերը և փիլիսոփայական քարը» վեպի բնագրում և հայերեն թարգմանվածքում՝ գնահատելով այս միավորների միջլեզվային փոխադրման արդյունքում դրանց իմաստագործաբանական առանձնահատկությունների պահպանումը և, ըստ անհրաժեշտության, առաջարկել տարբերակներ և ռազմավարություններ, որոնք կարող են հայ ընթերցողի համար ավելի տեսանելի ու ճանաչելի դարձնել հեղինակի մտադրությունը:

Սահմանված նպատակի իրագործման համար աշխատանքում առաջադրվել են հետևյալ **խնդիրները**.

- հասկնորոշել նորաբանությունների էությունը և տեսակները՝ կենտրոնանալով հեղինակային նորակազմությունների կազմության եղանակների, իմաստագործաբանական առանձնահատկությունների վերաբերյալ գոյություն ունեցող տեսությունների վրա՝ համակարգելով դրանք,
- վեր հանել թարգմանական համարժեքության, թարգմանության մեթոդների և հնարների վերաբերյալ առկա տեսական դրույթները՝ անդրադառնալով հեղինակային նորակազմությունների թարգմանության մարտահրավերներին և դրանց հաղթահարմանը,
- սահմանել (հեղինակային) նորակազմությունների թարգմանական համարժեքության քննության մեթոդաբանական շրջանակը,
- վերհանել «Հարրի Փոթերը և փիլիսոփայական քարը» վեպում հեղինակի գործածած նորակազմությունները և դասակարգել դրանք ըստ իմաստային խմբերի՝ ուսումնասիրելով նրանց ստեղծման ու կազմության կադապարները, ինչպես նաև բացահայտել հեղինակի մտադրությունն ու նորակազմությունների արտահայտած գործաբանական իմաստները,
- համեմատական վերլուծության միջոցով որոշարկել բնագրային նորակազմությունների հայերեն թարգմանությունների հիմքում ընկած թարգմանական հնարները և, ըստ անհրաժեշտության, առաջարկել նորակազմությունների թարգմանության այլ՝ իմաստագործաբանական համարժեքության ապահովման տեսանկյունից առավել նախընտրելի տարբերակներ,
- որոշել «Հարրի Փոթերը և փիլիսոփայական քարը» վեպի հեղինակային նորակազմությունների կազմության կադապարների հաճախականությունը և իմաստագործաբանական բեռնվածության առկայությունը՝ տոկոսային հարաբերությամբ, կիրառված թարգմանական հնարների հաճախականությունը և իմաստագործաբանական առանձնահատկությունների համարժեք փոխանցման ծավալը,
- ստացված արդյունքների հիման վրա կատարել եզրակացություններ՝ հեղինակային նորակազմությունների թարգմանական համարժեքության և հեղինակի մտադրության պահպանման մակարդակի մասին:

Առաջադրված խնդիրների իրագործման համար կիրառվել են մի շարք **մեթոդներ**, համակարգային վերլուծության մեթոդը, համատեքստային և խոսույթի վերլուծության մեթոդները, բառակազմական վերլուծության մեթոդը, լեզվաբանաստեղծական վերլուծության մեթոդը, լեզվաոճական և իմաստագործաբանական վերլուծության մեթոդը, քանակական և որակական վերլուծության մեթոդները, նկարագրական և զուգադրական վերլուծության մեթոդները:

Ատենախոսության **մեթոդաբանական հիմք** են ծառայել նորաբանությունների կազմության և իմաստագործաբանական առանձնահատկությունների (Է. Աղայան, Մ. Կարբե, Ա. Ռեյ, Վ. Զաբոտկինա, Զ. Գրին), թարգմանական մեթոդների ու հնարների (Փ. Նյումարք, Ժ. Վինեյ և Ժ. Դարբելեն), թարգմանական համարժեքության կարևորությամբ (Մ. Բեյքեր, Ա. Փիմ, Վ. Քոլլեր, Դ. Պանու, Յու. Նայդա) նվիրված աշխատություններում արծարծված դրույթները:

Աշխատանքի **արդիականությունը** պայմանավորված է վերջին տարիներին ժամանակակից գեղարվեստական գրականության մեջ ֆենթեզի ժանրի՝ համաշխարհային մեծ տարածում ստանալու և հայալեզու ընթերցողների շրջանում այս ժանրի ստեղծագործությունների նկատմամբ հետաքրքրության կտրուկ աճի և այս համատեքստում թարգմանության՝ որպես միջլեզվական և միջմշակութային հաղորդակցության հիմնական գործիքի կարևորման փաստով: Ուսումնասիրության արդիականությունը պայմանավորված է նաև լեզվի բառապաշարի՝ որպես հարափոփոխ համակարգի քննությամբ, որտեղ վեր են հանվում նորաբանությունների կազմության և թարգմանության մեջ դրանց վերաստեղծման խնդիրները:

Ատենախոսության **գիտական նորություն** այն է, որ չնայած «Հարրի Փոթերը» վիպաշարի վերաբերյալ լեզվական և ոչ լեզվական որոշակի ծավալի հետազոտությունների առկայությամբ՝ վեպում տեղ գտած նորակազմությունների բոլոր տեսակների և դրանց հայերեն թարգմանության համեմատական նման ծավալի համապարփակ վերլուծություն առկա չէ: Հետազոտության արդյունքում աշխատանքում առաջադրվում են նորաստեղծ լեզվական միավորների համարժեք թարգմանություն ապահովող նոր թարգմանական մոտեցումներ, որոնցով կարելի է առաջնորդվել հեղինակային նորակազմությունները հայերեն թարգմանական գրականություն փոխադրելիս՝ հաշվի առնելով վերջիններիս բուն իմաստագործաբանական առանձնահատկությունները:

Ատենախոսության **տեսական արժեքը** պայմանավորված է նորաբանությունների առանձնահատկությունների, ինչպես նաև դրանց թարգմանության և համարժեքության պահպանման խնդրի վերաբերյալ գոյություն ունեցող տեսությունների համեմատական վերլուծությամբ: Ատենախոսությունը արժեքավոր է նաև այն իմաստով, որ կամրջում է հեղինակի մտադրության, էական յուրահատկություններով առանձնացող ֆենթեզի ժանրի, հեղինակային նորակազմության, լեզվական միավորի կազմության և իմաստագործաբանական

բեռնվածության հասկացությունները թարգմաբանական տեսությունների հետ և տեղայնացնում դրանք թարգմանության պրակտիկայի կոնկրետ օրինակներում՝ ներկայանալով որպես այս հասկացությունների տրամախաչումները քննող միջերես և առաջադրելով մեթոդաբանական շրջանակ, որը կարելի է հետագայում փոխառել նմանատիպ հետազոտություններ իրականացնելիս:

Հետազոտության **գործնական նշանակությունն** այն է, որ հեղինակային նորակազմությունների թարգմանությունների վերլուծության արդյունքները ու թարգմանական ռազմավարությունների արդյունավետության գնահատականները կարող են հետագայում հիմք դառնալ ֆենթրզի գրական ժանրի ստեղծագործության թարգմանության մարտահրավերների ավելի հեշտ հաղթահարման, նորաբանությունների համարժեք թարգմանության ապահովման, ինչպես նաև վեպի գոյություն ունեցող թարգմանությունների հետագա վերահրատարակությունների դեպքում հավանական խմբագրումների և վերանայումների համար:

Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունից, գրականության ցանկից և հավելվածներից:

Ներածության մեջ ներկայացված են թեման, ուսումնասիրության ոլորտը, առարկան և փաստական նյութը, աշխատանքի գիտական նորույթը և արդիականությունը, սահմանված են աշխատանքի նպատակը և խնդիրները, մեթոդաբանական հիմքն ու հետազոտության մեթոդները, հստակեցված են տեսական և գործնական արժեքները:

Առաջին գլուխը (*Արդի անգլերենի նորաբանությունների լեզվագործաբանական առանձնահատկությունները*) ներառում է երկու ենթագլուխ:

Առաջին ենթագլխում (*Նորաբանությունները և դրանց կազմության եղանակները՝ որպես լեզվաբանական ուսումնասիրության առարկա*) քննվում է *նորաբանություն* հասկացությունը, տարբերակվում են նոր երևույթների անվանման անհրաժեշտությամբ դրդված նորաբանությունները և կոնկրետ անհատ հեղինակների կողմից ստեղծվող դիպվածային նորակազմությունները, ինչպես նաև ուսումնասիրվում են նորաբանությունների կազմության առանձնահատկությունները, դրանց ստեղծման և կազմության վերաբերյալ առկա տեսությունները: Այստեղ քննվում են նորաբանությունների կազմության եղանակով պայմանավորված դասակարգումների Մ. Կարբեի, Ֆ. Օ'Դելի, Փ. Նյումարքի և մի շարք այլ լեզվաբանների տեսությունները:

Երկրորդ ենթագլուխը վերնագրված է *Նորաբանությունների և հեղինակային նորակազմությունների իմաստային և գործաբանական առանձնահատկությունները*: Այս ենթագլխում նորաբանությունների ուսումնասիրությունը դիտարկվում է վերջիններիս զուտ անվանողական գործառնության իրականացման շրջանակներից դուրս, մասնավորապես՝ քննվում են նորաբանությունների իմաստային և գործաբանական հայեցակերպերի վերաբերյալ գոյություն ունեցող տեսությունները: Այս տեսությունները բխում են

այն դիտարկումից, որ հեղինակային նորակազմությունները ծառայում են ոչ միայն նոր առարկաների, երևույթների, իրադարձությունների անվանման նպատակին, այլև՝ որոշակի հավելյալ, հարանշանակային իմաստ են պարունակում:

Վ. Զաբոտկինան նշում է. «Բառի նշանակության մեջ կարելի է առանձնացնել զուտ իմաստային բաղադրիչը, որն ուղղված է դեպի նշանակալը և գործաբանական բաղադրիչը, որն ուղղված է դեպի խոսողը/ունկնդիրը և որը սահմանում է բառի կիրառումը համապատասխան գործաբանական համատեքստում»¹: Նա եզրակացնում է, այնուամենայնիվ, որ նշանակության հարանշանակային և գործաբանական բաղադրիչները փոխհատվում են²:

Երկրորդ գլուխը (*Նորաբանությունների և հեղինակային նորակազմությունների թարգմանական մարտահրավերներն ու դրանց հաղթահարման ուղիները*) քննարկում է լեզուների միջև բացարձակ թարգմանելիության անհնարինության գաղափարով պայմանավորված՝ համարժեքության ապահովման խնդրի կարևորությունը թարգմանաբանության մեջ (Յու. Նայդա, Վ. Կոմիսարով, Ռ. Յակոբսոն, Վ. Քոլլեր և այլք): Համարժեք թարգմանությունը դիտարկվում է որպես առավել մեծ մարտահրավեր ֆենթըզի ժանրի թարգմանության գործընթացում՝ հաշվի առնելով այս ժանրի ստեղծագործություններում հեղինակաստեղծ բառապաշարի առկայությունը:

Նորակազմությունների թարգմանական խնդիրների լուծման ճանապարհին ֆենթըզի ժանրի ստեղծագործության թարգմանիչը, առավելագույն թարգմանական համարժեքության ձգտելով, թարգմանության բազմազան ռազմավարություններ է կիրառում: Նորաբանությունների թարգմանության համար օգտագործվող ռազմավարություններին անդրադարձող տեսաբանների մի մասը ներկայացնում է ընդհանրապես լեզվում հայտնվող նորաբանությունների թարգմանական ռազմավարությունների դասակարգումներ, մինչդեռ մյուս մասն առաջարկում է հենց հեղինակային նորակազմությունների թարգմանության ռազմավարությունների համակազմեր: Նորաբանությունների թարգմանության ռազմավարությունների մասնավոր տեսությունները ածանցվում են ավելի ընդհանրական տեսություններից:

Քանի որ հեղինակային նորակազմությունների թարգմանության ռազմավարությունները և մեթոդները սերում են թարգմանաբանության մեջ առաջադրված առավել ընդհանրական դասակարգումներից, այս գլխում անդրադառնում ենք առհասարակ թարգմանության մեթոդներին ու հնարներին՝ ըստ հիմնարար տեսական շրջանակների և ներկայացնում Ժ. Վինեի և

¹ Заботкина, В. И. *Семантика и прагматика нового слова (на материале английского языка)*. Автореферат дис. доктора филологических наук. Москва: Московский ордена Дружбы народов государственный лингвистический университет, 1991, 7.

² Տե՛ս նույն տեղում, էջ 23:

Ժ. Դարբենենի³, ինչպես նաև Փ. Նյումարքի⁴ դասակարգումները որպես առավել նպատակահարմար միջոցներ ուսումնասիրվող ստեղծագործության հեղինակային նորակազմությունների միջլեզվական փոխադրման բնույթը որոշելու համար:

Երրորդ գլուխը (Հեղինակային նորակազմությունների իմաստային և լեզվագործաբանական առանձնահատկությունների համարժեք պահպանման խնդիրը Զ. Ռոուլինգի «Հարրի Փոթերը եվ Փիլիսոփայական քարը» վեպի հայերեն թարգմանվածքում) կազմված է երկու ենթագլուխներից:

Առաջին ենթագլուխը վերնագրված է «Հարրի Փոթերը և փիլիսոփայական քարը» վեպի հեղինակային նորակազմությունները որպես ֆենթեզիի ժանրաստեղծ տարրեր և դրանց թարգմանության խնդիրները: «Հարրի Փոթեր» վիպաշարի ցանկացած ուսումնասիրություն անխուսափելիորեն ծավալվում է վերջինիս՝ մի կողմից մանկական գրականության մեջ անգնահատելի համբավի և մյուս կողմից՝ ֆենթեզի գրական ժանրի պատկանելիության առանցքների շուրջ: Ինչպես արդեն նշվել է, այս ժանրին պատկանող յուրաքանչյուր ստեղծագործություն ընթերցողին տեղափոխում է իրեն հայտնի իրականությունից մեկ այլ իրականություն, որը կարող է այս կամ այն չափով հասվել ծանոթ իրականությանը, բայց կարող է նաև բոլորովին նոր, անհայտ, անծանոթ, արտասովոր աշխարհ լինել՝ իրեն հատուկ կերպարներով, տեղանքներով, առարկաներով, կենդանիներով և այդպես շարունակ: Այս ամենն իր արտահայտությունն է գտնում լեզվական մակարդակում: Ուստի ոչ մի այլ ստեղծագործության մեջ ընթերցողը չի բախվի իրեն ծանոթ իրականությունից դուրս գտնվող հասկացությունների նման բազմության:

«Հարրի Փոթեր» ստեղծագործության թարգմանությունն, այսպիսով, անխուսափելիորեն ենթադրում է հեղինակի նպատակի մեկնություն, գրքում զետեղված նորակազմությունների հարանշանակության վերհանում ու պատշաճ փոխանցում թիրախ լեզվի ընթերցողին: Վեպի թե՛ մշակութային, թե՛ ժանրային առանձնահատկությունների և հատկապես նորակազմությունների համարժեք փոխանցումը թիրախ լսարանին հսկայական նախաթարգմանական գործունեություն է պահանջում: Որոշ նորակազմությունների նախաթարգմանական մեկնությունը կարող է մեծ ջանքեր չպահանջել թարգմանից, քանի որ վեպի հանդեպ ահռելի հետաքրքրությունն ու պահանջարկը վերջինիս վերաբերյալ լրատվամիջոցներում տեղեկատվության հսկայական հոսք են առաջացրել: Նախաթարգմանական ուսումնասիրության իր գործունեությանը, այսպիսով, թարգմանիչը կարող է ծառայեցնել հենց հեղինակի բազում հարցադրույցները, գրքի կերպարների, նրանց անունների ընտրության, մի

³ Vinay, J. P. and Darbelnet, J. *A Methodology for Translation*. In L. Venuti (Ed.). Trans. by J. C. Sager & M. J. Hamel, *The Translation Studies Reader*. New York: Routledge, 2004, 84-87.

⁴ Newmark, P. *A Textbook of Translation*. Shanghai: Shanghai Foreign Language Education Press, 1988, 68-80.

շարք հետաքրքրական նորակազմությունների, տեղանունների և այլ անվանումների վերաբերյալ վերջինիս մեկնաբանությունները, բնորոշումներն ու բացատրությունները: Թարգմանչի գերխնդիրն այս դեպքում մեկն է. որոշել, թե որ դեպքում է անհրաժեշտ պահպանել և որ դեպքում թարգմանել հեղինակային նորակազմությունը՝ դրա գործաբանական արժեքի կորստից խուսափելու և ընթերցողին հնարավորինս լավ փոխանցելու այն ազդեցությունը, որ հեղինակը նպատակ է ունեցել գործել ընթերցողի վրա բառաստեղծման հենց այդ տարբերակով:

Երկրորդ ենթագլուխը (*Հեղինակային նորակազմությունների իմաստային և լեզվագործաբանական առանձնահատկությունները և դրանց համարժեք պահպանման խնդիրը թարգմանվածքում*) նվիրված է վեպից դուրս բերված 66 նորակազմությունների իմաստագործաբանական առանձնահատկությունների ու թարգմանական համարժեքության խնդրի ուսումնասիրությանը: Այս նպատակով նորակազմությունները դասակարգվել են համապատասխան իմաստային խմբերում՝ Գերպարների անուններ (25), Տեղանուններ (10), Առարկաներ, իրեր (11), Կենդանիներ և կախարդական արարածներ (5), Կախարդանքներ (5) և Այլ (10): Քննարկենք մի քանի օրինակներ:

Նորակազմությունների ամենից ուշագրավ խումբը, թերևս, կերպարների անուններն են: Նյարդային, կմկմացող, վախվորած կերպարով մույթ ուժերից պաշտպանություն դասավանդող առաջին հայացքից անմեղ ու անվնաս թվացող պրոֆեսոր Քվիրելի իրական կերպարը բացահայտվում է միայն առաջին հատորի վերջում: Գունատ ու վախվորած պրոֆեսորի մարմնում ապրում է չարագործ Լորդ Վոլդեմորը, որի դեմքը թաքնված է Քվիրելի գլխանոցի տակ:

*He was wearing Professor Quirrell's turban, which kept talking to him, telling him he must transfer to Slitherin at once, because it was his destiny.*⁵

Պրոֆեսորի *Quirinus Quirrel* անվան զննությունը թույլ է տալիս անել հետևյալ եզրահանգումները. *Quirinus* անունը որպես այդպիսին նորակազմություն չէ: Հռոմեական դիցաբանության մեջ այն պատերազմի աստծո անունն է⁶: Անվան հիմքում լատիներեն *quiris* բառն է, որն ունի *նիզակ* նշանակությունը: Որոշ առումով անվան նման ընտրությունը պատճառաբանված է, քանի որ հեղինակը, ենթադրաբար, շեշտել է այն փաստը, որ հերոսը անսպասելիորեն խոցում, հարված է հասցնում՝ իր իսկական էությունը բացահայտելով: Պրոֆեսորի ազգանունն, այնուամենայնիվ նորակազմություն է, որն իմաստագործաբանական կարևոր արժեք է ներկայացնում՝ ընթերցողի մոտ համապատասխան գուգորդությունները առաջացնելու տեսանկյունից: Այն պատկանում է Փ. Նյումարքի **նորաստեղծ բառերի** դասին, քանի որ նման

⁵ Rowling, J. K. *Harry Potter and the Philosopher's Stone*. Bloomsbury, 2014, 139.

⁶Quirinus. *Collins Dictionary*.

URL: <https://www.collinsdictionary.com/dictionary/english/quirinus?showCookiePolicy=true>
Retrieved: 30.06.2020.

հնչյունակազմով բառ լեզվում որպես այդպիսին գոյություն չունի: Այնուամենայնիվ, հնչողությամբ այն նմանվում է *squirrel*⁷ սկյուռ բառին, ինչը կարելի է հիմնավորել նրանով, որ արտաքնապես և շարժունակ հերոսը հենց այս անպաշտպան, նուրբ կենդանուն է հիշեցնում:

Հայերեն թարգմանվածքում նորակազմությունը *հնչյունադարձման* է ենթարկված, ուստի հայ ընթերցողի մոտ այն չի կարող ունենալ բնագիր տեքստի լեզվակրի հետ համարժեք ընկալում: Ընդ որում՝ Ա. Ջիվանյանի թարգմանության մեջ նորակազմությունը հնչյունադարձված է որպես *Քվիրեշ*⁸, իսկ Լ. Մկրտչյանի թարգմանության մեջ՝ որպես *Քուիրեշ*⁹: Իմաստային զուգորդումը հայ ընթերցողին նույնպես հասանելի դարձնելու նպատակով, թերևս, կառաջարկելինք թարգմանության երկու այլ, փոքր-ինչ ձևափոխված տարբերակներ: Այսպիսով՝ մի դեպքում կարելի էր նորակազմությունը պարզապես հնչյունադարձելու փոխարեն, վերստեղծել այն հայերեն *սկյուռ* բառի նմանությամբ՝ *Կյուռեշ*, որի շնորհիվ այն ավելի խոստուն կթվար թիրախ տեքստի լեզվակիրների համար: Հաջորդ տարբերակում կառաջարկելինք կրկին հնչյունադարձել անունը, սակայն, այս դեպքում հավելելով կամ պահպանելով *սկյուռ* բառի «ս» հնչյունը՝ արդյունքում ունենալով *Սքվիրեշ* կամ *Սքուիրեշ* տարբերակները:

Քանի որ կերպարների անունները հեղինակային նորակազմությունների՝ շարքում առանձնահատուկ տեղ են զբաղեցնում, քննարկենք ևս մեկ օրինակ՝ Հոգվորթսի բուժքույր, փոքր-ինչ գվարձալի կնոջ՝ *Madam Pomfrey*-ի անունը:

*He had been held up by Madam Pomfrey's fussing about, insisting on giving him one last check-up, so the Great Hall was already full.*⁹

Նա ներկայացվում է որպես բավականին խիստ, բանիմաց, իր գործից իսկապես լավ գլուխ հանող և պարտաճանաչ կերպար: *Madam Pomfrey*-ը կարծես կարողանում է բուժել յուրաքանչյուր հիվանդություն, վնասվածք, որը կախարդանքի հետևանք է: Այնուամենայնիվ, նա բավականաչափ խիստ է իր հիվանդների հետ և վերջիններից պահանջում է բոլոր կանոնների պահպանում և պարտաճանաչություն:

Poppy Pomfrey անվան մեջ նորակազմություն կարող է համարվել միայն *Pomfrey* ազգանունը, քանի որ *Poppy* անունը արդեն իսկ գործածվում է լեզվում: Այնուամենայնիվ, նույնիսկ այս անվան ընտրության մեջ կարելի է տեսնել հեղինակի դիտավորությունը. *Poppy* անունը ծագում է ծաղկի անունից և թարգմանաբար այն *կակաչ* է նշանակում: Բուսական անվան ընտրությունը բուժքրոջ համար խորհրդանշում է այն փաստը, որ վերջինս բուսաբուժության և այլ բնական միջոցներով է օգնում իր հիվանդներին: *Pomfrey* ազգանվան ծագման

⁷ Ռոուլինգ, Ջ. Բ. *Հարրի Փոթերը և Փիլիսոփայական քարը*: Թարգմ. Ալ. Ջիվանյանի: Երևան, Զանգակ հրատ., 2018, 143:

⁸ Ռոուլինգ, Ջ. Բ. *Հարրի Փոթերը և Փիլիսոփայական քարը*: Թարգմ. Լ. Մկրտչյանի: Երևան, Մեդիանեթ ՍՊԸ, 2004, 175:

⁹ Rowling, J. K. *Harry Potter and the Philosopher's Stone*. Bloomsbury, 2014, 327.

մանրամասները փոքր-ինչ ավելի դժվար է հայտնաբերել: Ամենից հավանական վարկածը կարող է լինել այն, որ Ջ. Ռոուլինգը ստացել է անունը *comfrey*՝ *purphunt* բույսի անունից, որը բուժական նպատակներով է օգտագործվում: Վերջինիս հնչյունափոխությունը կարելի է մեկնաբանել *Poppy* անվան հետ բաղաձայնությամբ ազդեցություն ստանալու դիտավորությամբ: Արդյունքում՝ Ջ. Ռոուլինգին հաջողվել է բուսաբուժությամբ զբաղվող բուժքրոջ համար բավականաչափ արտահայտիչ անուն ստանալ: Այնուամենայնիվ, նորակազմությունը դասակարգում ենք որպես **նորաստեղծ բառ**, քանի որ այս հնչյունակազմով այն լեզվում նախկինում չի առկայացվել:

Հայերեն թարգմանության մեջ, ինչպես հիմնականում տեղի է ունենում անձնանունների դեպքում, թարգմանչուհիները կիրառել են *հնչյունադարձման* հնարը: Միակ տարբերությունն այն է, որ Լ. Մկրտչյանն, ի հակադրություն Ա. Ջիվանյանի *Փոմֆրի* տարբերակին¹⁰, հնչյունադարձել է անունը որպես *Պոմֆրի*՝ այդպիսով փոքր-ինչ հեռանալով բնագրի արտասանությունից¹¹: Թարգմանության գործընթացում, այնուամենայնիվ, բնագրի տարբերակի հետ համարժեք ազդեցություն ստանալու և հեղինակի մտադրությունն ու դիտավորությունը պահպանելու տեսանկյունից՝ կառաջարկեինք հայերենում վերստեղծել նորակազմությունը հենց նույն հնարքով, որը հեղինակն է կիրառել, այսպես՝ հայերենի *քարխոտ* բառը նույն կերպ հնչյունափոխելով *Փարխոտ* տարբերակի՝ կստանայինք *Փոփի Փարխոտ* թարգմանությունը, որը իմաստագործաբանական բեռնվածության տեսանկյունից չէր զիջի բնագրի տարբերակին:

Վեպի կերպարների հեղինակային նորակազմությամբ արտահայտված անուն-ազգանունների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ վերջիններիս գրեթե բացարձակ մեծամասնությունը աչքի է ընկնում վառ արտահայտված իմաստային բեռնվածությամբ: Դրանք հեղինակի կողմից ընթերցողի վրա որոշակի գործաբանական ազդեցություն գործելու միտում ունեն:

Քննարկվող նորակազմությունների թարգմանության գործընթացում երկու թարգմանչուհիներն էլ հիմնականում նախապատվությունը տվել են *փոխանցման*՝ *հնչյունադարձման* հնարի կիրառմանը, ինչի արդյունքում, թեև տեղի է ունեցել նորակազմությունների ձևային համարժեքության ապահովում, այնուամենայնիվ նկատվում է իմաստագործաբանական ներուժի փոխանցման ձախողում, ինչը, կարծում ենք, որ ցանկալի չէ՝ հաշվի առնելով այն մտազուգորդումները, որ բնագրային տարբերակները կարող են առաջացնել բնագրի լեզվակիր ընթերցողների շրջանում:

Փոթերյան նորակազմությունների շարքում առաձնահատուկ տեղ են գրավում Ջ. Ռոուլինգի հորինվածք կախարդանքները, հմայախոսությունները,

¹⁰ Ռոուլինգ, Ջ. Ք. *Հարրի Փոթերը և Փիլիսոփայական քարը*: Թարգմ. Ալ. Ջիվանյանի: Երևան, Զանգակ հրատ., 2018, 326:

¹¹ Ռոուլինգ, Ջ. Ք. *Հարրի Փոթերը և Փիլիսոփայական քարը*: Թարգմ. Լ. Մկրտչյանի: Երևան, Մեդիանթ ՍՊԸ, 2004, 407:

որոնց կազմության համար ևս հեղինակը հետաքրքիր լուծումներ է գտել: Հեղինակային նմանատիպ հորինվածքների շարքից է *Locomotor Mortis* կախարդանքը, որն օգտագործում էին ոտքերին կապ դնելու համար:

*'Now, don't forget, it's Locomotor Mortis', Hermione muttered as Ron slipped his wand up his sleeve.*¹²

Նորակազմությունը **բառակապակցություն** է, որում *Mortis* բաղադրիչը **փոխառություն** է. այն լատիներեն *mors` uuh* բառի սեռական հոլովածն է: *Locomotor* բառը Merriam-Webster բառարանում սահմանվում է հետևյալ կերպ. “1. of, relating to, or functioning in locomotion, 2. affecting or involving the locomotor organs”¹³: Այսպիսով՝ այն վերաբերում է հենաշարժողական օրգաններին: Ուստի, բառակապակցության առանձին բաղադրիչների նշանակությունները նկարագրում են հենց այն, ինչ տեղի է ունենում ոտքերի կապի արդյունքում՝ վերջույթների անգործություն: Բնագրի ընթերցողն, անշուշտ, համապատասխան իմաստագործաբանական զուգորդումներն է ունենում՝ հաշվի առնելով անգլերենում լատիներեն *mors* արմատով կազմված *mortal` uuhwgn* բառի գործածությունը:

Ա. Ջիվանյանի թարգմանությունում նորակազմությունը թարգմանված չէ¹⁴: Լ. Մկրտչյանը հնչյունադարձման միջոցով այն փոխանցել է որպես *լոքոմոտոր մորտիս*¹⁵: Թիրախ լեզվի ընթերցողի մոտ նույնական մտազուգորդումների առաջացման տեսանկյունից՝ կառաջարկեինք նորակազմություն-կախարդանքի թարգմանության, օրինակ, *Շարժանահաբերուս* տարբերակը, որում կիրառված են համապատասխանաբար *շարժ, մահաբեր* և *ուս* ձևույթները: Ընդ որում, *ուս* ձևույթը այս դեպքում փոխառում ենք լատիներենից. խոսքը *-us* ածականակերտ վերջածանցի մասին է: Այն որոշակիորեն ապահովում է այն մոգական հնչողությունը, որ հատուկ է Ջ. Ռոուլինգի հորինած նորակազմություն-կախարդանքներին:

Այս ենթակարգի նորակազմությունների թարգմանության հնարների մեջ երկու տարբերակներում էլ հետևողականություն է նկատվում: Այսպես՝ Ա. Ջիվանյանը նախընտրել է չթարգմանել, պահպանել նորակազմությունների գրաֆիկական պատկերը, և այս ընտրությունը հավանաբար պայմանավորված է վերջիններիս գրաֆիկական պատկերի միջոցով արտահայտվող մոգական ազդեցությունների պահպանման միտմամբ: Լ. Մկրտչյանն, իր հերթին, բոլոր դեպքերում կիրառել է հնչյունադարձման հնարը:

¹² Rowling, J. K. *Harry Potter and the Philosopher's Stone*. Bloomsbury, 2014, 238.

¹³ Locomotor. Merriam-Webster. URL: <https://www.merriam-webster.com/dictionary/locomotor> Retrieved 02.07.2020.

¹⁴ Ռոուլինգ, Ջ. Բ. *Հարրի Փոթերը և Փիլիսոփայական քարը*: Թարգմ. Ալ. Ջիվանյանի: Երևան, Զանգակ հրատ., 2018, 240:

¹⁵ Ռոուլինգ, Ջ. Բ. *Հարրի Փոթերը և Փիլիսոփայական քարը*: Թարգմ. Լ. Մկրտչյանի: Երևան, Մեդիանթ ՍՊԸ, 2004, 298.


Վեպից հավաքագրված նորակազմությունների այս և մյուս դասակարգերի հետազոտությունը ցույց է տալիս, որ դրանց մեծամասնությունը որոշակի ուղերձ են հղում, որը հնարավոր է բացահայտել թե՛ տվյալ միավորի կադապարի ուշադիր զննության, թե՛ այլ լեզուներում դրա որոշակի բաղադրիչների կամ էլ ամբողջական միավորների որոնումների, թե՛ արդեն իսկ գոյություն ունեցող լեզվական միավորների նոր կիրառությունները մեկնաբանելու միջոցով: Նորակազմությունների իմաստագործաբանական ազդեցությունը հնարավոր չէ մեկնաբանել միայն եզակի դեպքերում, որը թերևս, չի բացառում հեղինակի ավելի խորքային մտադրության առկայությունը, որն, անուամենայնիվ, չբացահայտված է մնում: Նորակազմությունների թարգմանության մեջ թարգմանիչները, ակնհայտորեն, առաջնորդվել են ընդունված նորմերով, ձգտել ապահովել ձևիմաստային համարժեք փոխադրում, այնուամենայնիվ, երկու տարբերակներում էլ գերակայում է ձևային համարժեքությունը:

Կատարված վերլուծությունը թույլ է տալիս հանգել հետևյալ **եզրակացություններին.**

1. Ֆենթըզի գրականության հանրահայտ «Հարրի Փոթեր» ստեղծագործությունում ժանրաստեղծ կարևոր նշանակություն ունեցող հեղինակային նորակազմությունները կրում են մի շարք առաձևահատկություններ.
 - դրանք աչքի են ընկնում միաժամանակ թե՛ իրենց բառակազմական առանձնահատկություններով, թե՛ այդ կազմությունների միջոցով արտացոլված իմաստային պատճառաբանվածությամբ ու լեզվագործաբանական արժեքով,
 - բացի անվանական գործառնությունը նորակազմությունները այլ, կարևոր գործառնություն են իրականացնում: Դրանք իրենց մեջ որոշակի տեղեկատվություն են կրում իրենցով անվանված նշանակյալի վերաբերյալ, հստակ հարանշանակություն ունեն և ընթերցողի վրա որոշակի ազդեցություն են գործում՝ առաջացնելով տվյալ նշանակյալի նկատմամբ այն պատկերացումն ու վերաբերմունքը, որը հեղինակն է մտադիր եղել փոխանցել:
 - վերջիններս լուրջ մարտահրավեր են թարգմանչի համար, որը խնդիր ունի ոչ միայն վերակերտել հեղինակային հորինվածքներն իրենց յուրահատուկ կառուցվածքով հանդերձ, այլև՝ վերծանել, վերարտադրել և թիրախ լեզվի ընթերցողին փորձել հնարավորինս համարժեք կերպով փոխանցել դրանցում պարունակվող ողջ իմաստագործաբանական ներուժն ու արժեքը:
2. Նորաստեղծ միավորների կազմության մեջ գերակշռում են լեզվում առկա միավորների՝ ձևույթների, բառույթների համադրությամբ կադապարները. արդյունքում կերտվում են ածանցված կամ բարդ բառեր, բաղարկություններ ու բառակապակցություններ: Ընդ որում, հարկ է նշել, որ հեղինակային նորակազմությունների կազմության եղանակների հարցում չի նկատվում հստակ հետևողականություն՝ կապված կոնկրետ իմաստային խմբերի հետ:

Հեղինակի կողմից որևէ օրինաչափության որդեգրում այստեղ չի հայտնաբերվում, քանի որ իմաստային միևնույն խմբի նորակազմությունների շարքում հայտնաբերվում են կազմության միաժամանակ մի քանի եղանակներ:


3. Նորակազմությունների կառուցվածքային առանձնահատկությունների հետազոտությունը և հեղինակի նպատակի ու մտադրության բացահայտումը թույլ են տալիս ի հայտ բերել նորաստեղծ միավորների արտահայտած գործաբանական իմաստները: Հարկ է նշել, որ նորակազմությունների գրեթե 90 տոկոսում առկա է իմաստագործաբանական բեռնվածություն, մինչդեռ մնացած դեպքերում այն կա՛մ ենթադրվում է, կա՛մ չի հայտնաբերվել, կա՛մ էլ պարզապես բացակայում է, ինչի մասին հավաստում է հենց ինքը՝ հեղինակը (Գծապատկեր 1): Այս ամենից պարզ է դառնում, որ վեպում հեղինակային նորակազմությունների գերակշիռ մասը ոչ թե պարզապես անվանական գործառույթ են կատարում, այլ հստակ ուղերձ ունեն և տեղեկատվություն են պարունակում իրենցով նշանակված ռեֆերենտների վերաբերյալ:



Գծապատկեր 1

4. Վեպում տեղ գտած հորինված միավորները, որոնք իրենց յուրահատուկ բառակազմությամբ արտահայտում են հստակ գործաբանական իմաստներ, թարգմանության ընթացքում ենթարկվել են տարբեր տիպի միջլեզվական փոխադրման հանգեցնելով իմաստագործաբանական համարժեքության ապահովման տեսանկյունից համարժեք և անհամարժեք թարգմանությունների:
5. Երկու թարգմանվածքներում հեղինակային նորակազմությունների փոխադրման թարգմանական հնարների համակազմերը, ընդհանուր առմամբ, համընկնում են, ինչը թույլ է տալիս պնդել, որ ֆենիթըզի ժանրի այս ստեղծագործության հիմնական տեքստակազմիչ միավորների միջլեզվական փոխադրման գործընթացում թարգմանչուհիների որդեգրած ընդհանուր մոտեցումը միանման է (Գծապատկեր 2):

ՆՈՐԱԿԱԶՄՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ Ա. ԶԻՎԱՆՅԱՆԻ ԵՎ Լ. ՄԿՐՏՅԱՆԻ ԿԻՐԱՌԱԾ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳԾԱՊԱՏԿԵՐԸ



Գծապատկեր 2

- Վեպի հայալեզու երկու տարբերակներում էլ նորակազմությունների ավելի քան 60 տոկոսի թարգմանության ժամանակ կիրառվել է *փոխառության* (*հնչյունադարձում* և *տառադարձում*), կամ այլ կերպ անվանվող *փոխանցման* հնարը, ինչը, թեև թույլ է տվել ապահովել ձևային համարժեքություն, սակայն, հիմնականում հանգեցրել է նորակազմությունների իմաստագործաբանական ներուժի ոչ համարժեք փոխանցմանը թիրախ լեզու:

Այն դեպքերում, երբ անգլերեն բնագրում հեղինակային նորակազմությունը ստեղծվել է այլ լեզուներից փոխառություն միջոցով, *փոխանցման* հնարի կիրառմամբ թարգմանության ժամանակ իմաստագործաբանական ազդեցության կորուստ տեղի չի ունեցել: Սա բացատրվում է այն հանգամանքով, որ բնագիր տեքստում փոխառությամբ կազմված նորակազմությունների ծագման լեզուներին չտիրապետող ընթերցողների համար նույնպես այս բառային միավորները զուտ անվանական գործառնություն են կատարել: *Փոխանցման* կիրառմամբ թարգմանության ժամանակ իմաստագործաբանական ազդեցության կորսման դեպքեր չեն գրանցվել կամ գրանցվել են մասամբ նաև այն դեպքերում, երբ նորակազմության մեջ փոխառություն է օգտագործվել, որը նույն կամ նման հնչյունակազմով գործածվում է նաև հայերենում:

- Պատճենման* հնարով են թարգմանված հեղինակային նորակազմությունների շուրջ 16.7 տոկոսը՝ Ա. Զիվանյանի և 19.7 տոկոսը՝ Լ. Մկրտչյանի տարբերակներում, և բոլոր դեպքերում իմաստագործաբանական ազդեցությունը թիրախ լեզվում պահպանված է: *Պատճենման* հնարին,


տրամաբանորեն, նախապատվությունը տրված է բառակապակցությունների և լեզվում առկա ձևային միջոցով այլ կազմությունների թարգմանության դեպքում, ինչը հիմնականում հանգեցրել է համարժեքության ապահովման: Այս կերպ պահպանվել են ոչ միայն նորակազմությունների կառուցվածքային առանձնահատկությունները, այլև՝ արտահայտվել են գործաբանական նշանակություններն ու հեղինակի ուղեբժը: Լեզվագործաբանական համարժեքության են հանգեցրել նաև *պատճենում* հնարի համադրումները այլ հնարների հետ:

8. Ընդհանուր առմամբ, Ա. Զիվանյանի թարգմանությունում հեղինակային նորակազմությունների իմաստագործաբանական ներուժը թիրախ լեզվում պահպանված է 35.6 տոկոս դեպքերում, պահպանված չէ 40.7 տոկոս դեպքերում: Մնացած դեպքերում այն կա՛մ մասամբ է պահպանված, կա՛մ պահպանված չէ, բայց չի հանգեցնում մեծ կորստի, կա՛մ էլ անհնար է եղել պահպանել (Գծապատկեր 3):



Գծապատկեր 3

Լ. Մկրտչյանի թարգմանությունում նորակազմությունների իմաստագործաբանական ներուժը թիրախ լեզվում պահպանված է 37.3 տոկոս դեպքերում, պահպանված չէ 44.1 տոկոս դեպքերում: Մնացած դեպքերում այն կա՛մ մասամբ է պահպանված, կա՛մ պահպանված չէ, բայց չի հանգեցնում մեծ կորստի կամ էլ անհնար է եղել պահպանել (Գծապատկեր 4):



Գծապատկեր 4

9. Հետազոտության արդյունքները նաև ցույց են տալիս, որ հեղինակային նորակազմությունների իմաստագործաբանական ներուժի պատշաճ փոխադրման հնարի ընտրությունը հաճախ կախված է նորաստեղծ միավորի կազմության առանձնահատկություններից, օրինակ՝ ածանցված, բարդ

բառերի, ինչպես նաև բառակապակցությունների դեպքում կառուցվածքային և իմաստային *պատճենումը*, կարծես, ապահովում է այն կամուրջը, որը թիրախ լեզվի ընթերցողին հասանելի է դարձնում հեղինակի ուղերձը: Այլ դեպքերում արդյունավետ կարող են լինել *բառացի, համարժեքների* միջոցով, կամ նույնիսկ՝ *հոմանիշության* միջոցով թարգմանությունները:

10. Ի վերջո, կարելի է եզրակացնել, որ «Հարրի Փոթեր» ստեղծագործության և առհասարակ ֆենթեզի գրականության հեղինակային նորակազմությունների միջլեզվական փոխադրման ժամանակ կարևոր է ինչպես նորաստեղծ միավորների յուրահատուկ լեզվական-ձևային կառուցվածքների համարժեք պահպանումը, այնպես էլ հեղինակի՝ ոչ պակաս ստեղծագործականությամբ ներդրված գործաբանական իմաստների առավելագույն համարժեք հաղորդումը թիրախ լեզվի ընթերցողներին: Ֆենթեզի իրականության պատկերավորման իրենց կարևորագույն գործառույթը նորակազմությունները իրականացնում են ոչ միայն արտասովոր լեզվաձևային կառույցների, այլ առավելապես՝ իրենց արտահայտած գործաբանական իմաստների շնորհիվ, ուստի հարկ է խուսափել նորակազմությունների զուտ հնչյունային արտապատկերումից այն դեպքերում, երբ աղբյուր և թիրախ լեզուների լեզվակիրների մոտ դրանք չեն հանգեցնի միևնույն կամ գոնե մոտ ըմբռնումների և նախապատվությունը տալ իմաստագործաբանական տիրույթում առավելագույն համարժեքությանը: Հարկ է խուսափել անհամարժեք փոխարինումներից, *նկարագրական*, կամ *վերաձևակերպման* միջոցով թարգմանություններից, քանի որ այս կերպ չի ապահովվում հեղինակային նորակազմությունների վերստեղծումը թիրախ լեզվում, և թե՛ նշանակիչները, թե՛ նշանակյալները չեն առանձնանում որպես ֆենթեզի ժանրին բնորոշ միավորներ:

Ատենախոսության հիմնադրույթներն արտացոլված են հետևյալ հրապարակումներում.

1. Սողկյան, Բ., Շահբազյան, Ա. Թարգմանության տեսության փիլիսոփայական հայեցակարգը: *Բանբեր Երևանի Վ. Բրյուսովի անվ. պետական լեզվահասարակագիտական համալսարանի: Բանասիրություն, Լեզվաբանություն*, 1 (32), Երևան, Լինգվա հրատարակչություն, 2015, 355-370:
2. Սողկյան, Բ., Շահբազյան, Ա. Նորաբանությունները՝ որպես ֆենթեզի ժանրի տեքստակազմիչ գործոն (Ջ. Ք. Ռոուլինգի «Հարրի Փոթերը և փիլիսոփայական քարը» վեպում): *Գրականության և մշակույթի արդի հիմնախնդիրներ*, Պրակ Է, Երևան, Լինգվա հրատարակչություն, 2016, 193-204:
3. Сокирян, К. О., Шахбазян, А. А. Interpretation of Fantasy as a Pre-Translation Activity. *Слово, высказывание, текст в когнитивном, прагматическом и культурологическом аспектах: материалы VIII Междунар. науч. конф.*, т. 1, Челябинск: Энциклопедия, 2016. 498-502.
4. Շահբազյան, Ա. Բառակապակցությամբ արտահայտված հեղինակային նորաբանությունների կառուցվածքային և իմաստային առանձնահատկությունները Ջ. Ռոուլինգի «Հարրի Փոթերը և փիլիսոփայական քարը» վեպում: *Բանբեր Երևանի Վ. Բրյուսովի անվ. պետական լեզվահասարակագիտական համալսարանի: Լեզվաբանություն և Բանասիրություն*, 1 (54), Երևան, Լինգվա հրատարակչություն, 2020, 154-166:
5. Շահբազյան, Ա. Հեղինակային նորաբանություն տեղանունների գործաբանական արժեքի պահպանման խնդիրը «Հարրի Փոթերը և փիլիսոփայական քարը» վեպի հայերեն թարգմանվածքում: *Բանբեր Երևանի Վ. Բրյուսովի անվ. պետական լեզվահասարակագիտական համալսարանի: Լեզվաբանություն և Բանասիրություն*, 1 (58), Երևան, Լինգվա հրատարակչություն, 2021, 178-193:
6. Շահբազյան, Ա. Կախարդական իրերի անվանումների թարգմանության խնդիրը «Հարրի Փոթերը և փիլիսոփայական քարը» վեպի հայերեն թարգմանվածքում: *Բանբեր Վ. Բրյուսովի անվ. պետական համալսարանի: Լեզվաբանություն և Բանասիրություն*, 1 (68), Երևան, Լինգվա հրատարակչություն, 2024, 219-237:
7. Shahbazyan, A. Word-Formation Processes in Invented Magical Spells in the Novel “Harry Potter and the Philosopher’s Stone” and the Problem of their Adequate Translation into Armenian. *The Way of Science: International Scientific Journal*, 7 (137), Volgograd: Scientific Survey, 2025, 41-44.
8. Shahbazyan, A. Calquing as an Effective Means of Conveying Author’s Neologisms in “Harry Potter and the Philosopher’s Stone” into Armenian. *The Way of Science: International Scientific Journal*, 9 (139), Volgograd: Scientific Survey, 2025, 47-50.

АННА АРТУРОВНА ШАХБАЗЯН
ПРОБЛЕМА СОХРАНЕНИЯ ЭКВИВАЛЕНТНОСТИ АНГЛИЙСКИХ АВТОРСКИХ
НЕОЛОГИЗМОВ В АРМЯНСКОМ ПЕРЕВОДЕ (НА МАТЕРИАЛЕ РОМАНА
ДЖ. К. РОУЛИНГ “ГАРРИ ПОТТЕР И ФИЛОСОФСКИЙ КАМЕНЬ”)

РЕЗЮМЕ

В данной диссертации рассматривается проблема адекватности воспроизведения авторских неологизмов в армянском переводе романа Дж.К. Роулинг “Гарри Поттер и философский камень” с учётом их семантико-прагматических особенностей.

Цель исследования заключается в определении жанрообразующей функции авторских неологизмов в оригинале и армянском переводе романа “Гарри Поттер и философский камень”, в оценке степени сохранения их семантических и прагматических особенностей при переводе, а также в выработке, при необходимости, стратегий и решений, способствующих полному раскрытию авторского замысла для армянского читателя.

Для достижения цели исследования были поставлены следующие *задачи*:

- определить сущность и типы неологизмов, опираясь на существующие теории, рассматривающие процессы образования авторских неологизмов и их семантико-прагматические особенности и систематизировать их,
- выделить существующие теории по проблеме эквивалентности перевода, методы и приемы перевода, рассматривая трудности перевода авторских неологизмов и пути их преодоления,
- сформулировать методологическую основу исследования эквивалентности перевода (авторских) неологизмов,
- выявить и разделить авторские неологизмы романа “Гарри Поттер и философский камень” на семантические группы, исследовать особенности их словообразования и структуры, а также определить авторский замысел и прагматический потенциал этих новообразований,
- определить переводческие приёмы, использованные в армянских переводах неологизмов исходного языка, провести их сопоставительный анализ и при необходимости предложить альтернативные, более предпочтительные варианты перевода, обеспечивающие семантическую и прагматическую эквивалентность,
- определить частотность композиционных моделей и семантико-прагматическую нагрузку авторских неологизмов в романе “Гарри Поттер и философский камень”, а также частоту применяемых

переводческих приёмов и долю случаев адекватной передачи семантических и прагматических особенностей в процентном отношении,

- оценить эквивалентность авторских неологизмов в переводе и степень сохранения авторского замысла, сопоставив полученные данные.

Актуальность исследования определяется растущей мировой популярностью жанра фэнтези в современной художественной литературе и повышенным интересом к подобным произведениям среди армяноязычных читателей, что еще раз подчеркивает значимость перевода как основного средства межъязыковой и межкультурной коммуникации. Кроме того, исследование актуально, поскольку рассматривает лексику как развивающуюся систему и затрагивает вопросы образования неологизмов и их передачи на язык перевода.

Новизна диссертации заключается в проведении беспрецедентного комплексного исследования всех типов неологизмов в романе “Гарри Поттер и философский камень” и их армянских переводов. На основе проведенного анализа в диссертации предлагаются новые подходы к переводу, обеспечивающие эквивалентность при передаче неологизмов. Эти подходы могут быть использованы для перевода авторских неологизмов на армянский язык с сохранением их семантической и прагматической функции.

Теоретическая значимость диссертации определяется сопоставительным анализом существующих подходов к изучению неологизмов и вопросам обеспечения их эквивалентного перевода. Ценность исследования определяется также тем, что оно связывает понятия авторского замысла, жанра фэнтези, отличающегося своими существенными особенностями, авторских неологизмов, состава языковой единицы и ее семантико-прагматического содержания с теориями перевода и выявляет их на конкретных примерах переводческой практики, выступая в качестве интерфейса, рассматривающего взаимосвязи между этими понятиями и формирующего методологическую основу, которая может быть применена в будущих исследованиях аналогичного характера.

Практическая ценность исследования заключается в том, что результаты анализа переводов авторских неологизмов и оценка эффективности применяемых стратегий могут способствовать преодолению трудностей при переводе жанра фэнтези, обеспечивать адекватную передачу неологизмов и служить основой для доработки существующих армянских переводов.

Диссертация состоит из введения, трех глав, заключения, списка литературы и приложений.

ANNA ARTUR SHAHBAZYAN
THE PROBLEM OF EQUIVALENT PRESERVATION OF ENGLISH AUTHOR'S
NEOLOGISMS IN THE ARMENIAN TRANSLATION (BASED ON J. K. ROWLING'S
NOVEL "HARRY POTTER AND THE PHILOSOPHER'S STONE")

SUMMARY

The dissertation explores the issue of preservation of author's neologisms in the Armenian translation of the novel "Harry Potter and the Philosopher's Stone" by J.K. Rowling, focusing on the semantic-pragmatic peculiarities of the newly coined lexical units.

The *aim* of the work is to determine the genre-forming significance of the author's neologisms in the original and Armenian translation of the novel "Harry Potter and the Philosopher's Stone", assessing the preservation of the semantic and pragmatic features of these units as a result of their transfer from one language into another and, if necessary, to suggest options and strategies that could make the author's intention more visible and recognizable for the Armenian reader.

To achieve the aim of the research, the following *objectives* have been set forth:

- to identify the essence and types of neologisms, focusing on the existing theories on the processes of formation of author's neologisms, their semantic and pragmatic peculiarities, and to systematize them,
- to single out the existing theories on the issue of equivalence in translation, translation methods and procedures, addressing the challenges of translating author's neologisms and ways to overcome them,
- to establish a methodological framework for investigating the equivalence of translation of (author's) neologisms,
- to reveal the neologisms used by the author in the novel "Harry Potter and the Philosopher's Stone" and classify them according to semantic groups, studying the patterns of their formation and composition, as well as to reveal the author's intention and the pragmatic meanings expressed by the neologisms,
- to determine the translation procedures underlying the Armenian translations of the original neologisms through comparative analysis and, if necessary, to suggest other, more preferable options for translating neologisms from the perspective of ensuring semantic and pragmatic equivalence.
- To determine, in percentage terms, the frequency of compositional patterns and the semantic and pragmatic load of the author's neologisms in "Harry Potter and the Philosopher's Stone", as well as the frequency of the applied translation procedures and the proportion of cases where semantic-pragmatic peculiarities were adequately transferred.

- To conclude, from the obtained results, on the equivalence of the author's neologisms in translation and the preservation of the author's intention.

The **topicality** of this research is determined by the growing global popularity of the fantasy genre in modern fiction and the rising interest in such works among Armenian-speaking readers, which highlights the importance of translation as the main means of interlingual and intercultural communication. The study is also topical in that it considers vocabulary as an evolving system, raising the issues of neologism formation and issues of their transfer into the target language.

The **novelty** of the dissertation stems from the absence of a comprehensive study of all types of neologisms in “Harry Potter and the Philosopher’s Stone” and their Armenian translations, despite the existing research on the series. As a result of the conducted analysis, the dissertation offers new translation approaches aimed at achieving equivalence in the transfer of neologisms. These approaches may serve as guidelines for the translation of author's neologisms into Armenian with the preservation of their semantic and pragmatic load.

The **theoretical significance** of the dissertation lies in the comparative analysis of the existing approaches to the nature of neologisms and the challenges of their translation with the maintenance of equivalence. The value of the research is also determined by the fact that it bridges the concepts of author's intent, fantasy genre distinguished by its essential peculiarities, author's neologisms, composition of a linguistic unit and its semantic and pragmatic load with theories on translation and localizes them within specific examples of translation practice, serving as an interface that examines the interrelations among these concepts and establishing a methodological framework that can be applied in future research of a similar nature.

The **practical value** of the research is supported by the fact that the results of the analysis of translations of the author's neologisms and the evaluation of the effectiveness of translation strategies can serve as a basis for overcoming the challenges of translating fantasy, ensuring adequate rendering of neologisms and support future editing or revision of existing Armenian translations of the novel.

The dissertation is comprised of an introduction, three chapters, a conclusion, references and appendices.

